



գաւառին հասցիները դէպք մայր-  
քաղաքը քաղաքը միշտ, իրենց  
քով գտնուած քանի մը Չապիթիներ-  
րուն թոշակը վճարելու համար հարկ  
եղած ստակն իւր չէր մնար իրենց  
քով. հետեւաբար անոնց վրայ որ և է  
հակառակին անկուրելի կը լինէր :  
Եթէ այս գանդամներն հիմնաւոր  
կամ արգար են, գաւառական ու-  
տիկանա թեան անդորտ թեան պա-  
տասխանաւոր թիւը կառավարու-  
թեան վրայ կիցնայ : Այս պարագա-  
յին մէջ, գաւառները գործուած ու-  
ճիւղներուն վիճակագրութիւնը պա-  
կասութեան կամ յանցանքի խոտոտ-  
վանութիւն մը չկրնար լինել գաւա-  
ռական իշխանութեանց կողմէ : այլ  
ամբաստանութիւն մը կեդրոնական  
իշխանութեան գէտ : Եթէ այս է իւր  
խիական նշանակութիւնն, այն ժա-  
մանակ ամասխան տեղեկագրութեանց  
արժէքն երկու տարեքէ պիտի բաղ-  
կանայ : վիճակագրական տեղեկու-  
թիւններէ և ստիկանական լուա-  
դայն օրէնագրութեան մը խման լի-  
նելու գորտ թիւնէ : Բայց կրնայ հար-  
ցուիլ թէ այսպիսի պայմաններու մէջ  
ձեռք բերուած վիճակագրական տե-  
ղեկութիւնը կրնա՞ն գործական ար-  
դիւնք մ'արտադրել, և թէ ոճրա-  
գործութեանց պարբերական ցուցակ  
մ'առուդիւ պիտի կրնայ աւելի զօ-  
րութիւն ունենայ ստիկանական դը-  
րութիւնը քարտեզորդէ տարու, մինչ-  
դեռ ցուցակի մէջ չանցած և իրենց  
փաստակար հետեւանք Գրան աչքին  
առջև կեցած անթիւ իրողութիւնը  
չկրնայ ունենալ :

ՀՆԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 25 դեկտ.  
Կողմաթայէն հեռագիր մը կը ծա-  
նուցանէ թէ թշնամիք Քեապիլի մտա-  
կայ բարձանց վրայ իրենց բնած գրից  
վրայ կը կենան միշտ, բայց իրենց թիւն  
զգալի կերպիւ կը նուազի :

Լազարիք յոյժ կը պարտուեն Ռօ-  
պերմի գործարն, որ բազմաթիւ մար-  
դիկ կախելով Աֆրիկաները կատարեցոց,  
և ասիկց զատ թշնամուցն գորտ թիւնը  
ճշգրի իմանալու հոյ շարքա : Դեանա-  
պիս կը պարտուեն որ լրագրաց թղթա-  
կիցներուն թոյլ շտուա հեռագրերն ու  
նամակներն որիկել՝ առանց դիմորդական  
իշխանութեանց քննութեանը ներկայելու :  
Բազմաթիւ Անգլիական գորք Բորթու-  
մաթիւն և Աւելիլիշն նու նուազու վրայ  
են Պոնդայ երթալու համար, որ հեա-  
զնեաէ Աֆրիկանան որիկուած գորաց  
տեղը պիտի գրտին : Աֆրիկանանի  
գորաց թիւը մեծապէս աւելցնելու հար-  
կըն ամեն լրագրիք ձանչած են, և կը-  
սեն թէ դժուարութիւնը առաւել մեծնալ  
կատանան Հէրաթի գորտիկոց կողմա-  
նէ, որք զէպի Քեապիլի կը քալեն, և  
ամեն նշաններէ կը տեսնուի որ Աֆրիկանը  
կրնան ամբողջութեամբ կրնան զրկուեալ  
են : Պատերազմին սկիզբն իր անհրա-  
հանց և անկարգ խառն մը կը ներկա-  
յանային Անգլիացոց առջև, բայց այսօր  
յամառ դիմադրութիւն կընեն, հակա-  
ռակ իրենց կրած մեծ կորուստներուն :

Երէկ իրիկուն ամուսնած հեռագիր մը  
կը ծանուցանէ թէ Լիվերքուլն Նիւ Օր-  
լանս դնացող Լա Պորիսիա անուն շու-  
գենաւն ընկղմելով 400 հոգի ծովամոյն  
եղեր են :

Բեդրոտուրի 24 դեկտ.  
Ի մահ գառապարտեալ երեք ոչնչա-  
կանք երէկ մահուան պատիժ կրեցին  
Օտէայի մէջ :  
Կայտն երէկ Շուվաթի կամսին մաս-  
նաւոր ունեկողութիւն չնորհելով երկա-  
թորէն խորհրդակցեալ անոր հետ :  
Կայտն հոյն հիւանդութիւնը ծան-  
րացաւ :  
Մախուց չափաւորման յանձնարար-  
հարցը վարչական կարեւոր և արժանա-  
կան բարենորոգումներ առաջարկեց, ա-  
ռանց որոյ ծախուց չափաւորում ան-  
հնարին է :

Այս աստուծոյ հասնէ հեռագիր  
Լոնտոն, 24 դեկտ.  
Աֆրիկանան կը հեռագրեն Քոյ-  
միկ թէ ապրտամբ Պոպ Հիւարի բերդն  
տեղ և Անգլիացոց կողմն անցած Աֆ-  
րիկաներուն ինչքը կորստակեր են :

Պ. Շարմէլ Լաքուր անձնական տրկա-  
րութեան պատճառաւ նախարարութեան  
մէջ մտնելու յոժարութիւն չունի :

Կը կարծուի թէ Պ. Տրէյսիլի գոր-  
ծակցութեամբ նոր նախարարութիւն մը  
պիտի կազմուի ընդհուպ :

Լոնտոն 24 դեկտ.

Օտ. Քոնս.	9 3/4
Փո. 1865	12 1/4
» 1869	12 1/4
» 1871	53 1/4
» 1872	18
» 1873	40 1/2
» 1874	81 1/2
Անգլ. Քոնս.	97 3/8

Փարիզ 24 դեկտ.  
Օտ. Քոնս. 9.85

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կրտուի թէ թուրքօ-հեղինական  
յանձնարարին յառաջիկայ նիսան եր-  
կուշարթի կամ երեքշարթի օրը աւ-  
զի պիտի ունենայ :

Բ. Գուսը ծանոց դեպքանատանց  
թէ Գարտաղի ինդոյն կարգադը-  
րութեան համար իւր ձեռքէն եկա-  
ծըն ըրած է, հեաւարար Ալլա-  
նիացոց և Գարտաղցոց միջև տե-  
ղի ունեցած և տեղի ունենալիք կը-  
ուրեներուն պատասխանատուութիւնն  
իւր վրայ չկրնար աւնուի :

Մայրաքաղաքին Անգլիական  
Մօնիթօր տիւ Բօմբէր լրագրիքը կը  
ծանուցանէ թէ Սըր Հ. Լէյլըտ փա-  
փուկ նիւթոյ մը վրայ ծանր դիտա-  
ղութիւններ ըրեր է Բ. Գրան :

Կառավարութիւնը նկատելով  
որ գաւառաց մէջ տասանորդի և  
ուրիշ արոց հաւաքումը ստիկանու-  
թեան ձեռքը կատարուելով բազում  
զեղծմունք կը ծագին ու գտնուա-  
նէր կը լինին, որոշած էր անցեալնե-  
րն որ այս գործն ստիկան զինուորաց  
ձեռքէն աւնուելով քաղաքային պաշ-  
տօնատարաց ձեռքը կատարի :

Այս բարենորոգման գործադրու-  
թիւնը փորձելու համար Պրուսայի  
նահանգն որոշուեցաւ, և արուած  
հասանդուց համեմատ՝ յիշեալ նա-  
հանգին կուսակալը արոց հաւաքման  
գործն իւր կողմէն անուանեալ քա-  
ղաքային պաշտօնատարաց յանձնեց :  
Փափաքելի էր որ այս անօրէնութիւ-  
նը տէրութեան ամեն նահանգաց  
մէջ տարածուէր, մանաւանդ որ  
յայնժամ բազում մտախիան զինուորք  
իրենց բուն պաշտօնը վարելու կա-  
րող կը լինին :

Կայտերական Լիւնան քօրվէթն,  
որ ութ թիւղանօթ կը կրէր, վերջին  
փոթ օրիկներուն ժամանակ ցամաքն  
ինկաւ թեաքիկոց եղերք, ուր գորք  
աւելու դնացած էր : Դաւաատիք  
աղտոնեցան, բայց արքունի շոգե-  
նաւն ամբողջապէս ընկղմեցաւ : Մա-  
լաքօֆ Հասան փաշան նաւուն ընկղ-  
մած տեղը դնաց քննութիւն ընե-  
լու համար :

Հալէպէն Մօնիթօր տիւ Բօ-  
մբէրի գրուած նամակ մը Պէյրը փա-  
շային հան հասնին և ժողովրդեան  
կողմէ համակրական ընդունելութիւն  
գտնելը պատմելէ ետե կը ծանուցա-  
նէ թէ նոյն օրն Սնիլո-Թուրք գորա-  
վարը տեղւոյն Հայոց, կաթողիկ Հա-  
յոց, Յունաց, կաթողիկ Յունաց և  
Մարօնաց հոգևոր գլուխներու  
պատգամաւորութիւն մ'ընդունել է :  
Երկու տուն պատրաստուած էր  
Հալէպի մէջ Պէյրը փաշայի և անոր  
մտղոց ընտելութեան համար :

Յանձնարարման երբեմն թեաքիկոց  
կառավարիկ Մայիլա փաշային գալտա-  
կան պիտի պատէ՝ Աթիլ ներսերն  
իւր ուղեւորութիւնը շարունակելէ  
աւաջ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

Կրկի իրիկուն գոյուեցաւ 10.20

Լատինացոց Կրկիկան տօնին  
առթիւ այսօր Պորտան դոց է :

Բուսիլի երկօթուրի	Քր.	33 50
Քրիստոս	մր.	860
Քրիստոս	Մուսիլի	3 50
Մէհիլի տարբերութիւն		6 31
Հինգոց		48
Մէրտիք		18 20
Պրիկն		370

ՄԱՅՊԱՅԻՆ

Ս. Պատրիարքը կառուածական  
վկայագրի մասին Բ. Գրանէն ի Պատ-  
րիարքարան զրկուած ծանուցադրին  
ի պատասխանի երէկ աղբու թագ-  
րի մ'ուղղեց առ Բ. Գուսն, որով  
իմամներուն կնքոյն ընծայուած ա-  
պահովութիւնը չընդունիր և ան-  
հերքելի փաստելով կը հաստատէ  
թէ կառավարութիւնն Հայոս մ'ըն-  
չից, և կամ անպատկ կամ անփա-  
ռանդ և այն լինելու մասին տեղե-  
կութիւն ստանալու համար պարտա-  
ւոր է անպատճառ Աղբային Պատ-  
րիարքարանի դիմել զիւրպաէս Ս.  
Պատրիարքը թահրիլի Լիւնան ատեն  
գրուած կանոնադրութիւնն ալ կը  
հերքէ իր անարգար, զի անով Պու-  
սայ մէջ գտնուած բոլոր թագերը  
Տաճիկան անուամբ կնքեալ են և  
քրիստոնեաց անանձին թագ մ'ու-  
նեցած չեն :

Ս. Պատրիարք Հայրը կառուածա-  
կան վկայագրին ներքև իմամին կը-  
նիքը դրուելու առաջարկութիւնն  
Աղբ. Պատրիարքարանի իրաւանց և  
արժանապատուութեան գէտ կը հա-  
մարի, և կը պահանջէ որ այսպիսի  
փափուկ ժամանակի մէջ Հայոց Աղբին  
իրաւանց և գարուոր արածուութեանց  
հակառակ չը գործուի ի վնաս Աղբին  
կը լսեմք թէ Յունաց Պատրիար-  
քարան ալ սկսեր է բարքել :

Երէկ Տիգրանակերտի խիստ ու-  
նուն գաւառէն սրտածմիկ հարստա-  
հարութեանց և շարագործութեանց  
նկարագրի տեղադրի մ'եկաւ ի Պատ-  
րիարքարան, ոտուար և սև տեա-  
րակ մը, որոյ մէջ Գեր. Առաջնորդ-  
Փիլիպպոս սրբապետի բացակայութե-  
նէն ի վեր կատարուած արտեր իր-  
զութիւնը մանրամասնօրէն պատ-  
մուած են :

Կը յուսամք որ վաղուան Ընդհ-  
ժողովոյն մէջ Տիգրանակերտի ծա-  
նուցեալ ինքիքը կը վերջանայ ի դո-  
հութիւն Տիգրանակերտի դժբաղդ-  
ժողովրդեան :

Երէկուան փունջի մէջ հեաւեալը  
կը կարգուէր :

Սըր յիշին մեր աչիւն ընթերցողք  
թէ Գեր. Տ. Խօրէն կալիսկոպոս Նար  
Պէյ հրաման ստացած էր Պատրիար-  
քարանէն, որ Բա մանիկոյ այցելու-  
թեանէն յետոյ Լոնտոն երթայ, և իւր  
կողմը Աղա Յովսէփի ամուսնութեան  
պատկար թիւնն ընէ : Արգ. Պատ-  
րիարքարանն այս անգամ իմանալով  
որ Աղա Յովսէփի արդէն երկրորդ ան-  
գամ Ռօթիլա անուն Լատինացոց մը  
հետ իւր հայրենի տան մէջ ի ներ-  
կայութեան ազգականաց և բարեկա-  
մաց ի ձեռն բարեկամ վարդապետի  
միջոյ ամուսնացած է, փութացեր  
գրեր է առ Գեր. Նար-Պէյ թէ արը-  
ւած հրամանն իրեւ չեղեալ կը հա-

մարուի, եթէ ստոյգ է այս զրոյցը :  
Իսկ Նորին Գերարտատուութիւնը  
պատասխանելով թէ՛ ինքը բնաւ  
տեղեակ չէ իւր եղբորն արդէն ա-  
մուսնացած, և ամուսինը սղջ ըլլա-  
լուն, խոստացեր է տեղեկանալ, և  
միւս կողմանէ Պատրիարքարանէն  
վաւերական ծանօթութիւններ իւրը-  
րեր է : Պատրիարքարանն ալ հարգ-  
դեր է իւր ընդունած ծանօթու-  
թիւնները :

Գեր. Տ. Յ. Միլիան այս առաւօտ  
Գաղղիական շոգենաւալ Կ. Պոլիս հա-  
սաւ իղիկրէն :

Տրապիզոնի Աղբային վարչութեան  
կողմանէ պատրիարքարան եկած  
հեռագիր մը կը ծանուցանէ թէ  
քաղաքէն քանի մը ժամ հեաւի վի-  
զերա դիւզին մէջ Չէօր օղլու կոչ-  
ուած քանի մը շարագործ թուրքեր  
տեղւոյն պատուարը Հոյ ընտանի-  
քի մը տուն ներթալով՝ պահանջե-  
րն որ կամ իրենց հետ Տրապիզոն  
երթան կառավարութեան ներկայա-  
նայու և կամ քառասուն ոսկի վճա-  
րեն իրենց : Այս արտաւայ պահան-  
ջումը չընդունուելով, ընտանիքէն  
երեք հոգին կը կապեն լեռը կը տա-  
նին փրկանք առնուլու յուսով : Այս  
երեք Հայերէն մին փրաւորեալ վե-  
ճակի մէջ կը յաջողի փախել Տրապի-  
զոն դայ և կառավարութեան իմա-  
ցընել իրողութիւնը : Աւերադէ ըսել  
թէ ոչ շարագործները բռնուած են,  
ոչ ալ միւս երկու Հայերն աղա-  
տած :

ԹՂՊԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Բարեկր 18 նոյ. 1879  
Տէր,  
Քաղաքին զիւրպիկը մէջ շարագոր-  
ծութիւնը կը շարունակեն հակառակ  
տէրութեան կամաց և համեմատ սովո-  
րութեան, ինչպէս որ ամուս 11ին զի-  
շերը Օձտեղ զիւզին մէջ տեղի ունեցաւ  
հետեւեալը :

Միւրեքնի շրջակայ Քօլօս, Չիօս և  
այլ մի քանի գիւղից բնիկներն երեսուն  
(50) ի չափ Մահմետականք Լալի կեր-  
պարանօք յաղից ցրուալ զինեալ և ա-  
մենն ալ հեծեալ զիւրը ժամը քին ա-  
տենները յանկարծ Օձտեղ գիւղը կը  
յարձակին և Գեորդ անուն Քէհեային  
տունը կը պաշտեն : Պաշարուն այնպէս  
ի գործ կը գրուի, որ մարդուն կարծելը  
կողայ թէ յիշեալ շարագործք ամեն  
հաւանական պատահականութեան յաղ-  
թելու պարտատ՝ առաւել ճակատամարտ  
տարու երած են քան թէ աւազակութեան,  
որովհետեւ երբ այն ետուն ընկերաց  
վեցը հեռուն զիւզին վրայ բարձրահայեաց  
զիւր մը գրաւելով կը պահպանեն իր  
յառաջապահ կամ վերջապահ գորքի պաշ-  
տօն կատարելով ինչպէս օրէն է ստա-  
րագրաց մէջ, անգին մէկն ալ մնացած  
ներուն ընդհանուր հրամանատարութիւն  
կրնէ, որք իրենց ստացած հրամանացն  
համեմատ երբեմն այս և երբեմն այն  
կողմէն հրացան կարճակեն, ոտանք տա-  
նը երկրը կը քանդեն, այլք դուռ և  
պատը, և այսպիսի բարեկարգեալ եղա-  
նակաւ մը վերջապէս տանը մէջ կը մըտ-  
նեն, Այս միջոցին Քէհեան արդէն իւ-  
մացած ըլլալով զիւրուն եկածը, տունը  
մանողներուն կը զիւրպիկ հրացանի հար-  
ուածներով, որոց ձայնն կարծընայ  
նոյն զիւրը պատահարար Քէհեային  
տունը հիւր գտնուող Հաճի-Պաշա անուն  
Մահմետականն և մօտարեակի գրացիք,  
հետեւաբար ամենքը մէկանց շարագոր-  
ծաց զէ՛մ կրակ ընել կիսին սակայն պա-  
տերու ետե պատասխարուելով, որովհետեւ  
շարագործաց պահակ խումը իւր հեաւ-  
ւոր զիւրքէն միշտ կրակ կը տեղացնէ  
այն ամենուն վրայ, որք իրենց անակ-  
ներէն դուրս ելնելու փորձ կը փորձեն  
յօղնութիւն իրենց զրակից՝ Քէհեային :  
Գնտակաց փոխանակութիւնն այսպէս եր-  
կուսեալք բաւական ժամանակ կը տեէ,  
յարուս Գեորդ Քէհեան ստրկն ծանրա-

պէս և ուրիշ զիւրացի մ'ալ թեթև կերպիւ կը վիրաւորուին, բացի Հաճի-մուշա անուն անձէն, որ մի քանի զնապակներէ հրաշք իմն անվանուող կը մնայ, հանդերձներն միայն այրելով: Այս միջոցին չը զիրացուիլ թէ՛ զիւրացուց թէ՛ չարազործած զնապակներէն չարագործաց մին քարերազորար ծանրապէս կը վիրաւորէ քէնէնային տանը դրանը առաջը և կիցնայ. սոի տեսնելով իւր ընկերները կ'սկսին երկիւղել շատով, որով հաղիւ կրնան քէնէնային տունէն 60 ուրեց տրաքողութեամբ պրամ և հանդերձները անուրի մը մէջ ամիսիկով ձիւ մը մէկ կողմը և վիրաւոր ընկերներն ալ միւս կողմ մը կ'ապել և մեկնել: Վիրաւոր չարազործէն վաղած արեան յորդոթներէն ընդհանուր կարծիք կայ թէ յիշեալն անշուշտ ստատակած ըլլալու է նոյն գիշերը: Այն զէպրին հեռեկայ օրը Գէորգ քէնէնային եղբոր իմաց տուաւ քաղաքիս կառավարութեանը և իրաւունք պահանջեց, հետևաբար տեղւոյ Միւստայի Ամուսի Մուսայիի Մեծ Միջոցէ Էֆէնտի Ալլահվերտեան՝ հեռը մէկ գաղթի տուած Օձակ գիւղը դնաց, ինչպէս կըսուէր, եղբոր իմաց քննելու համար, որն որ երկու օր վերջը կը դարձա՛հէտը միայն եղբոր թեան դրուող արտուսով իւր ընկերով: Բարեբաղդար Միւստայի Ամուսի Մուսայիի գիւղը գտնուած միջոցին չարագործը երկրորդ յարձակում մ'ալ չէին ըրած ի վերջ իրենց ընկերին, ինչպէս ընդհանրապէս կը կասկածուէր հոս, որ ատեն չէր գիտցուի թէ՛ Միւստայի Ամուսի Մուսայիին իւր մէկ գաղթի միայն ի՞նչ պէս պիտի վարուէր յիշեալ չարագործաց հետ: Զայդ ընդ պատմութեանս կարեւոր է գիտնալ Չեղ նաև որ՝ ըստ վրկուսով թեան զիւրացուց, սոյն չարագործը դարձեալ այն միւսնայ անձինքն են, որք ասից ճիշդ երկու տարի առաջ՝ անդամ մ'ալ սոյն Գէորգ քէնէնային տունը մը տուած և այն անգամուհա՛յ տուան և հինգ հարգը դրուէր ստակ և ուրիշ նիւթեր տարած ըլլալով, ի վերջոյ դարձաւ վերայից շահ-մուշա անուն Մուսայիի կանին շնորհիւր գողտըր ձեռք բերուած է: Այսպէս ահա Հայ գիւրացուց ազգեցիկ անձանց, այն է քանանայից, քէնէնայից վրայ կատարուած այսպիսի յարձական չարագործութիւններէն՝ շքը-շակայ գիւղից Հայ բնակիչը (որովհետև այսպիսի գէպրեր միայն Հայոց է որ կը պատահի) սարսափահար կը մնան՝ կատարած իմաց թէ՛ գուցէ նոյն չարագործը կամ թէ՛ համանուն ուրիշ խումբ մը ի հանդէս գայ, այս կասկածը թե՛րևս այնքան չափաբեկիչ դերերը, եթէ տեղւոյ կառավարութիւնը որ Միւսայի սարքիւթիւն ըլլալով իւր տակը քանի մը կարևոր քաղաքներ ալ ունի, իր ունեցած քանի գաղթիէն զատ, որք թահ-սիւթի կամ ուրիշ գործովք միշտ սողալու անդին ցրուեալ կը գտնուին, առաւել դրուելուն մ'ալ ձեռք ձգելով անմիջապէս ի խուզարկութիւն ելնէր չարագործաց. բայց ո՞ գիտէ կառավարութիւնն ալ ինչ իրաւացի պատճառներ ունի սոյնպէս չընելուն: Իմանք այս իրաւացի պատճառը ոտ կերպով կը բացատրեն թէ՛ կառավարութիւնն ըստ որում շիջուար ամեն գիւղի մէջ յաւանութեամբ ստեղծուած թիւնքները, անուրազակի կերպով որպէս թէ հասկցնել կուզէ եղբոր թէ՛ զիւրացիք պէտքէ միշտ գիտնալ գրանուին և իրենց վրայ յարձակող չարագործները դարձնեն և հարածն, ինչպէս այս անգամ Միւստայի Ամուսի Մուսայիինն ալ նոյնը բերանացի հասկցուցեր է Օձակ գիւղացուց. բայց այս վերջինները պատասխաններ են թէ՛ այդպիսի բան մը ընելու համար կառավարութեան պաշտօնական մէկ թոյլտուութեանը պէտք է ունենան, որպէս զի սպառնով ըլլան թէ ի վերջոյ սպանելու չարագործի մը համար՝ ալ և սոյն առարկութեամբ ամիսէ թէ թէ (արեան գին) չը պիտի պահանջուի իրենցմէ:

Ինչպէս որ նախընթաց թուով դրած էր քաղաքի թուրք թանկ տաններուն համար, այս չարթու ուրիշ մի քանի թու-

նետաններու ալ (որոց մին Պիտայի թիւն թէ յիւր Սանի է) Վարիէն ուղուցան, ուր կըսուի թէ պիտի հարցաքննուին կառավարական ինչ ինչ գործոց համար, որք զիրենք դատարարուելու կտակա՞ծի են թակոյ կընեն: Այս թանկ տաններուն ալ իրաւութիւնը անանկու և իրենց վարած պաշտօնները իրենց անձին տրածանեցը հետ բաղդատելու արժանի բան է, բայց ի՞նչ օգուտ, որ ժամանակին հարաուրութեան կրցիք են զիւրի և առար չնորհէ մինչև այսօր դորուող պաշտպանութիւններու տակ կ'ապրին: Ասոնց մէ՛ մէկուն զիւրացի ծառան տեսայ անցեալ օր, որ շուկային մէջ Յոյն մը կը ծեծէր, հաւատքի օրէնքի կը հայհոյէր. կառավարութեան ուրիշ պաշտօնեայ մ'ալ սարսափելի եղանակաւ քանի մը ջարհ պաններ կը դանակածէր շուկային բազմութեանը մէջ, այնպէս որ Պոսայ մէջ բարձրատիճան պաշտօնատարն ոչ այդ վարմունքը կրնայ ի գործ դնել, ոչ ալ այդ ծառային կամ պաշտօնի շարժողութիւնը ահարեկէ: Ստուգելու կայ սերական կառավարութիւնը վարչական հանգստութեանէ զատ դրամական մեծ շահ մ'ալ կ'ունենայ, եթէ իր մասն բարեկարգման մէջ մը տեղացի թուրք թանկ տանները ի սպաս արդիւն կառավարական պաշտօն վարելէ, մէջ մ'ալ աղէտ և մեղաւոր ժողովրդեան զնքերը հաւաքէ, որոնցք թիւ մեծ մասն աննաշնորհ տեսակէն են՝ վերջին պատերազմի շնորհիւ թէ՛ գողութեամբ և թէ՛ ուրիշ միջոցաւ մը ձեռք ձգուած. սոյն թէ ոչ, գործոց ընթացքը այնպէս կը ջուր լինի թէ՛ ամեն գաւառի մէջ միայն տեղ եթէ ստոր Պիտայի մահճէ մէջի գտնուի, տանին ալ զբարձրան համար չարագործութիւնը պակաս չը պիտի ըլլան:

Քաղաքիս Միւստայի Մուսայիի Մեծ Միջոցէ Էֆէնտի Ալլահվերտեան, որուն այդ պաշտօնով քաղաքս գալը հաղիւ երկու ամիս կընէ, վերջին օրերս հրաժարական մատոց պաշտօնէն, և կիսանաթը որ հրաժարականն ընդունուած ըլլալով, տեղն ուրիշ մը պիտի գայ:

ԱՐՄԵՆՈՎ

**ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՍՈՑ ԱՌՈՒՈՅՆ**

• • • Տէր խմբագիր • • •  
 Երկու այս ամիսը հսկանքներ տալ սոյն մէջ Սիւ քաղաքը գացի և 9 օր մնայի. գիտաւոր գործս էր Սոյ վանքն այցելել. այն վանքը որ իւր հին յիշատակներով Հայոց թեան մի նուիրակներ սրբալայրն է: Թամ մը հիւսուէն տեսայ Սիւ քաղաքը, որ ընտ հետաքրքրաշարժ բան մը չունէր իւր մէջ. ահագին շէնք մը որ քաղաքին վերեւ կերեւոյ, գրաւեց զիմ նայուածք. տեղալի աչքը դիտել սկսայ զայն: Հարկ չըլար հարցունել թէ ի՞նչ էր այն ահագնասեւի շէնքը և Վրդիս պարձանը, Հայոց թեան վերջին վառքը, կիլիկիոյ Ս. Աթուէն էր այն. Գանի կը մտնէ նայի, աւելի սքանչելի կերեւար ինձ և վայրկեան մը վրայէն աչքուս չէի կրնայ վերցունել: Իրիւրուան գէմ էր երբ քաղաքը մտայ, ուր քիչ մը վերջը ամեն բան դիչերուան խաւարին մէջ թաղուեցաւ. ամբողջ գիշերը մտաւտանութեան մէջ անցուցի, հազար տեսակ բաներ երևակայութեանս կը ներկայէին և զիս անհուն գիտա կընէին. վերջապէս առաւուրը. արեգակը լեռանց գաղաթիւն երևնալ սկսաւ. ձգեցի անկողնին, հարուեցայ շուտ և վազեցի ի վանք: Վանքը հին բերդերու նման պարսպաւոր, 500 տուն բնակիչ ունեցող քաղաքի մը մեծութիւնն ունէր: Նախ՝ արեւելեան կողմը մեծ և գեղեցիկատեսիլ դուռ մը առ յին ներկայացաւ. յորմէ ելլել եկել ի վազուց հետէ արդիւնեայ է. եւայ դուռը մը վեր, գառայ հիւսիսակողմեան

մեծ դուռը. ուրիշ սովորաբար կը յաճախեն անցորդք. անիէ ներս մը ապ. խել մը մեծ ու փոքր շէնքերու աւերակներ տեսայ, քանի յառաջացող աւերակներու և կիսուեր աննեակներու տխուր աւատարմներն աչքին առջև չապայան: Սեղանատունն նման պարզ սենեակէ մը ներս մտայ, ուր կը գտնուէին երեք Սեւցի վարդապետք, որոնք հաւատարիմ մնալով իրենց ուխտին, յանձն առած են աւերակներն սղահարմել. Յոյճանէն, Յակոբ և Սահակ վարդապետներն արդէն անձանօթ չըլլալով մեզ, շատ մը հարցումներ ըրի Ս. Աթուէն ներքին և արտաքին վիճակաց վրայոք, առաւ պատասխաններս մէկը մէկէ աւելի տխրաւիթ էին: Ուղեցի ամեն կողմը տեսնալ վարդապետք ինձ առաջնորդեցին. նախ անցանք հիւսիսային կողմը, ուր կաթողիկոսաց յատկացեալ երկնային խիտ շքեղ և փառաւոր խոյսպժմ կիսուէր սենեակներու սրբաճնէր կը գտնուէին: Երեսուցի կարճեցի որ անուրի լեռան մը վրայ գաւ ի վեր ճամբաներու մէջ կը քալեմ. այն ատիճան որ փրատակաց քարերն հարկ և փայտերն մէկը մէկու վրայ դիպուած, ճամբան խաւ փանտ և անցքը գաւարացուցած են. այսու ամենայնիւ յառաջացանք գէպի այն կողմը, ուր կը գտնուի մեծաճաշակ վիհարանը. վիհարանը մանալէն առաջ առջի կողմը բաց մեծ սրահի մը մէջ գտնուեցանք. որուն կիսուէր պատերուն և ձեղունին վերայ վարդապետ ձեռաց հիւսանքի նկարներն կ'երևան. այս սրահին մէջտեղը շատ մը սենեակներ կան, որոնց ամենն ալ վիհարան կրնան կոչուել. նաև անոնց մէջ են բարձիւքը սեղանատունը, աշխատութեան սենեակը, նշարանը, պարտէյի դուռը և եւ: Ըսինք որ սենեակներ կան թող սխալ չհասկնայ ընթերցողը. սենեակներուն տեղերը և վրան բաց պատերը միայն կան այսօր: Այս սենեակներուն տալի գեղեցիկութիւնը նկարագրեցին, որ այժմեան վիհակին նայելով անհաստատի թուեցաւ ինձ. բայց մի քանի ակեղծօր փայտեայ դարդարանաց բեկորներ յոյց տուին որ հաւատացի. ըսին թէ այն սենեակներուն մէջ անանկ գեղեցիկները կային որ մարդ ներս մտած ատեն ամբողջ ձեղունին և պատերուն ակեղծօր ձողիկներէն և գայնդը դոյն նկարներէն աչքերը կը շարձար. այս ամենը տեսնելէ և սրտակուար ըլլալէն զիմ մտանք մեծ վիհարանէն ներս: Այս մեծ սրահը յիւսուի սքանչելի է. թէ և ակեղծեալ չէ, սակայն այնպիսի հիւսանքի գեղեցիկ նկարներով զարդարուած է, որ հազուադիւրս է ճահաստանի մէջ: Ենքը խաղաձև և գիրքը խիտ հուճեղ է: Արիւղ գեռ կանգուն կեցած է. բայց անձրեւի կաթիլներէն ձեղունին բաւական տեղերը և պատահանները բարձրակին բաց ըլլալուն պատճառաւ պատերուն շատ կոպիտը ծանրապէս վնասուած են. սակէ զատ Արեւելեան կողմի թիւր աւելի վնասուած լինելով տանիքին կանգունի մը չամ տեղը վրած է:

Ասիէ ալ ելանք անցանք միտրանայ, ուխտաւորաց և սպասաւորաց յատկացեալ կողմերն. ասոնց մէջ բոլորովին վրած աւերածներն քիչ չոյ, բայց բնակութիւնը կարելի և կող մէկ սենեակ մը անդամ չըլլաւ նուիր. ամենն ալ նորոգութեան պէտք ունին: Ալ ասոնք մէկը ի վեր նկար մանամը Ս. Տաճարին մէջ:

Թ-Վ-Բ-Բ-Պ

• • • Խմբագրապետ • • •  
 Գարդապարաց-Արեւելեան ընկերութեան անօրէն խորհուրդս կը վուս թոյ Չեղ պատուական թերթին միջոցաւ իմացուներ մեր մեծարգոյ ազգայնաց և ընկերութեան անդամաց թէ նախորդ ամսոյ 20ին բացուած է ընկերութեան գիշերօթիկ վարժարանն կրցայ Ս. Գանիէի վանոց մէջ, որ ընկերութեան արամադրութեան ներքեւ գրուած է: Արամադրութեան արք Հօր հրաժարութեամբ խնդրելով որ անբոյս Չեղ պատուական թերթին միջոցաւ հրատարակել բարեհասնքս:

Մնամք յարգանքս  
 Ատենադպիր Ստեփանակ

Թ. Ե-Պ-Պ-Պ Տ-Բ-Բ-Պ Ու-Ք-Պ-Պ

**ՆՍՄԱԿԱՆԻ**  
 Ա- ընկերացի Հայոց  
 Սոյն ընտիր մատենադր, որ ի պահան սեռին կուսմն ու պարտքերը բացատրելով նորա իրաւունքները կը պաշտպանէ, և որոյ հասցովը Ազգասէր Հայոց հասցեայ ընկերութեան նուիրուած է, արժանի է ամեն ազգայնաց քաջակրթութեան, զի իւր պարունակութեամբ շարժուող թերթի լուսատարութիւն յորդորելով իւր արդեամբ անոր օժանդակել կը նկարագրէ:

Կը ծախուի Գալաֆեան և Պրէնկեան գրամատուցաւ քով ի գին 1/2 արծաթ մէճիւս:

Ընկերութեան կիւրք չկող մատենաք անվաւեր կը համարուին:

**ՄԵՒԵՆԻ**  
 ԵՐԿՈՒՆԵՐ Թ. ԳԱՐՈՒՐ  
 Տղաւ է Տղաւ

Իննեւորդ գարու ազգային պատմութեան հետեւ զեղեցիկ դըրուած, որ հայրենասէր հեղինակին հմուտ և ճարտար գրչէն կըստ թուրս լէճնի վէպին հարազատ ընկերն է՝ ամեն ազգասէր հայոց ընթերցման արժանի:

Մայրաքաղաքիս ամեն հայ գըրամատուցաւ քով կը գտնուի:

Գին 1 թուպլի:

**Ա. Զ. Գ.**

Հայերէն և Գաղղիերէն լեզուաց հմուտ մէկը կը ինդիտի Պարսկաստանի Գալթէօ քաղաքի Ազգային ուսումնարանի մէջ գաստիտուելու համար:

Նոյնպէս Հայերէնի և ձեռաց սրածի տեղեկութիւն ունեցող վարժուհի մը յիշեալ քաղաքի համար: Ծառ յարմար կը լինի եթէ երկու գաստուք, այլ և կին լինին: Ուրիշ պէտք է գիտէ Ֆինճանը քաղաքի օրու շու թիւ 19 պղնձի վաճառական Ֆինճեքեան Յովակիմ Էֆէնտի վաճառատունը:

**Ի Լ Ա Ն**

Երեքթի խայրիչէնին Խասքեոյատէ քեային թամիկաթ մահայինատ թեւարիւմ իսէն օն օն պէշ պին դըլէ մըդ տար թիւսուր վէ սաճ կուր տայէրինին պէշեր դըլէսի լիւրայի Օսմանի եիւզ դրուշ հիտալիլէ օն պէշ բարա ֆիլ իլէ թալէպի Էօհտէ սիտաէ թեքարբիւր խուսպ տահա զիտաէլէ թալիպ օլանլարբին իշպու շէշըր քեանունի ելիլին օն եէսին ճի կիւնիւնէ գաստար բաղար իրթէսի վէ բէրչէմտէ կիւնլարի Երեքթի խայրիչէնիտաէ մէճիւնի կէլ մէլէրի իլան օլուուր:

3 քեանունի ելիլէ սէնէ 93

